

նրանց ուղղութիւնը միտ է, փնտաւար է, ազգակործան է,—աշխատեցէք նրանց հետ մրցել, նոյնն անել ինչ որ նրանք են անում, նոյնն եռանդոտ գործունէութիւնը կատարել, աւելի լաւ, աւելի ազգասէր ուղղութեամբ...

Բայց ի՞նչ կը նշանակէ ուրիշի եռանդոտ գործունէութիւնը գտնել փնտաւար, ազգափնտաւ,—ե մի և նոյն ժամանակ միայն աղողակել, գանգատվել, հայհոյել, լաց լինել և ոչինչ չանել:

Եթէ միտնարները մեր ազգի և եկեղեցու թշնամիներ էք համարում, գործեցէք ինչպէս նրանք են գործում, մրցէք նրանց հետ, ոչնչացրէք նրանց ուղղութիւնը, նրանց գործունէութիւնը ձեր ուղղութեամբ, ձեր գործունէութեամբ:

Փառք Աստուծու մենք ունենք ահագին կղեր, ունենք Եջմիածին, ունենք վանքի մէջ ազգային ահագին նիւթական միջոցներ,—մենք էլ կարող էինք բողոքական միտնարների հետ մրցելու համար հիմնել մի հայ-լուսաւորչական գործի միտնարական ընկերութիւն: Իսկ ոչինչ չանել, բայց մի և նոյն ժամանակ հայհոյել, աղաղակել և բողոքել,—դա թուլութեան և անընդունակութեան նշան է, աւելի ոչինչ:

Բ.

ՆԱՄԱԿ ԽՄԱԿԱՐԻՆ

Թիֆլիս, 29 յունիսի

Այսօր կարդացի «Մշակի» 116 համարը, ուր հրատարակված է Մոսկովայից ուղարկված Ն. Տ. Գ. ի նամակը՝ իմ յօդուածիս առիթով: Աւելորդ եմ համարում մանրամասն քննելու այդ նամակը, որ լի է ամենայն տեսակ հակասութիւններով և

Այն էի ուզում ասել, որ այդ մեծ մարդիկ, այդ հանճարները իրանք իրանց չեն ճանաչում, և այն անձը, որ ինքն իրան չէ ճանաչում, նա իր հայրենիքը չէ կարող ճանաչել:

Երևանից Թիֆլիս գալիս մի պատահական անցք ինձ վրա մեծ տպաւորութիւն արեց: Առաջին կայարանում մենք հասանք մի կառքի և նրա հետ Գեղարմայ ծովը եղերքներն անցանք: Մի կայարանում, որի ծառան մի հայ պատանի էր, մեզ առաջարկեց տաքացրած կաթ խմել, քառորդ ժամից զինի պատանին վերադարձաւ դէպ ինձ, մի զարդարուն կաշմած գիրքը ձեռքին, հարցնելով, թէ դա ֆարմաստիքի գիրք էր թա: Կս տեսայ մի փառքաղիք աշխարհաբառ աւետարան և նրան վստահացրի, որ կարող էր կարդալ. անհկարագրելի էր պատանու ուրախութիւնը. տաքացրաւ չոր կար, որ առաջին անգամն էր նորան աղոյթի մի ընծայ ստանալ: Այդ էին ընծայողները, երկու օտարազգի միտնար կանայք... որոնք Ռեմիից Թիֆլիս էին գնում. ևս զոցա առաջ իմ ոչնչութիւնս էի դուռ, և միթէ կարելի չէր, մտածում էի, մի քանի գրքեր վեր առնել գիւղերում բաժանելու համար, և ո՞վ կը խնայէր երբ ևս նրանց իմ նպատակը յայտնէի:

Գրքերը հասարակ դասակարգի մէջ այժմ կարդացվում են, մանաւանդ ազգին վերաբերեալները: Ես տեսայ Երևանում արհեստագործների մի խումբ հաւաքված, որոնք Գաւիթ բէկ էին կարդում. բայց այդ բաւական չէր, նոքա լաց էին լինում, երևում էր, որ այդ ընտիր վկայատուութեան սրտաշարժ տեղերից մէկին էին պատահել:

Բայց ես որքան հայ գիւղերից անցկացայ, ինչ սրտալիք ընդունելութիւնների պատահեցի: Եւ եթէ ամեն մի գիւղում մի ազգային վկայատուութիւն թողած լինէի, օրինակացանի նման մի մեծ ծառայութիւն արած կը լինէի: Ամեն տեղ չըջապատում էին և հաղար ու մի հարցումներ տալիս, բոլոր ազգի վրա, բոլոր ազգի համար, օրինակ շին է մտածում ազգը մեզի համար, ինչ է նրա կամքը, ինչ հրամայում է մեզ անել. մենք գիտենք որ այժմ մի պաշտպան ազգ ունենք և նորան ենք պարտական մեր կեանքը և այդ կեանքը մենք պատրաստ ենք ամեն բոլոր նորան զոհելու: Առաջին անգամ ճանապարհորդը չփորձվում է. նա տեսնում է պարզ, որ այդ ազգին հոգիք այնքան մեծ համարումը ունեն ազ-

գարդակ ֆրազներով, բայց ոչինչ մի արժանաւոր և ծանրակշիւ փաստով իմ յօդուածի վերաբերմամբ, Ն. Տ. Գ. ի նամակի գլխաւոր միտքը և նրա մանր ու չնչին շարժառիթները պարզելու համար՝ բաւական է միայն մի քանի ծաղկաբաղ անել. դրանից ընթերցողը կը տեսնի: Ն. Տ. Գ. ի չափազանց կանխակալ կարծիքներն ունենալը—մի տեսակ անհիմն մարգարէութիւն է, որ միշտ արդելք է լինում մարդու առողջ դատելու և ստանութեամբ քննելու այն կամ այն իրողութիւնը: Ն. Տ. Գ. ի ինքնագովութիւնը, որ մի պարսաւելի երեւոյթ է տեսնել լրագրութեան մէջ և այն դատաւարտելի լուծութիւնը, որ դեռ պահում է Ն. Տ. Գ. իմ նամակում յիշած ճիշդութիւն արդարեւորի մասին, որոնք իրանց անձնական հայեանքի մէջ խառնում են անփորձ երիտասարդների և արանց անունով (բայց իրանց գրչով ու թանաքով) հրապարակ դուրս գալիս:

Ն. Տ. Գ. ի նամակի առաջին տողերը ըսկոտում է այսպէս. «Ես «Մշակի» 67 համարում նամակ գրելիս՝ հաստատապէս համոզված էի, որ Գ. ի. առաջաւորս աւելի քան երկու և աւելի քան երկու անգամ քննել է հարկ չը կայ ընտելու. նրա դարձակութիւնը ակնհայտ է: Ուրեմն նոյնպիսի մի ֆրազ կարելի է ասել և Ն. Տ. Գ. ի վերաբերութեամբ. ես իմ նամակ գրելիս՝ հաստատապէս համոզված էի, որ Ն. Տ. Գ. անպատճառ պաշտպան կը հանդիսանայ ակադեմիկներին և ազգային գործերին: Բայց ինչ դուրս եկաւ սրանից. միթէ սա բարեխիղճ քննադատութիւն է, միթէ սա այն բաղձալի վերաբերման է, որի վրա ակնարկում է Ն. Տ. Գ. ի նամակի մէջ:

Մեր լրագրութեան մէջ պատահում է, որ այս կամ այն յօդուածի առիթով տպւում են ուրիշ անձների կողմից (թէ և շատ անգամ անարժան) գովասանութիւններ: Բայց որ ինքը՝ նամակի հեղինակը՝ գովասանութիւններ չարէ իր երկրորդ նամակի մէջ իր առաջին և միակ նամա-

զի վրա, որ նորան երևակայում են մի հզօր և կատարելապէս կազմակերպված մի մարմին, գիտնական, հարուստ, անձնագործ անդամներից լրագրացած: Չը հաստատել նոցա համարումները, չը տալ ազգին այն կատարելատիպը, որնա չուրի, դա նշանակում է սպանել նրանց սրտի նորաբողոք կենդանութեան յոյսը, խախտել այդ յաւերժական գիւղացոյց հաստատութիւնը, որ տալիս և չորս դարերի բարբարոսական ժամանակամիջոցը ոչինչ չէ կարողացել առնել:

Շատ ժամանակ չէ որ մի գիւղացիները աղ-դային մտքերով ողորդվել են, սիրտ աւել, և սկսել են պաշտպանել իրանց կայքը և կեանքը: Սովից առաջ այդ զգացմունքը չէր նշմարվում. այդ միջոցին նրանք իրանց բնկած զուրկ խոնարհած անտարբեր նայում էին յափշտակութիւններին և գրկանքներին, ինչպէս մի ամենօրեայ պատահարի վրա: Այժմ գիւղացին հասկացաւ, որ իր գոյութիւնը նշանակութիւն ունի, նա այնքան հողին հաւատարմութիւն չէ, նա բարձր է իր հարեան ազգերից, նա մի հզօր պաշտպան ունի, որ նրան կը փրկէ վտանգից, ինչպէս որ փրկեց սովից. նորա աչքի առաջ մեռան իր զրացի քրդերը, տաճիկները, որոնք թողաւորութիւն ունէին: Այդ իրական դէպքով նա համոզվեց որ իր ազգը, թաղաւորական ազգիցն էլ հզօր է և գրանով ակնածելի դարձաւ գրացիների աչքում:

Եթէ այս փոքրիկ գործով, սովածներին տրված օգնութեան համար եմ ասում, ազգը մեծ և ամբաւ արդիւնք ունեցաւ, մեռելական թմրութեանից յետ կանչեց իր որդոց, յուսոյ հոգի տուեց նրանց, որչափ ուրեմն անասանաւ արդիւնք կը յառաջանար, եթէ գիւղացու երես-կայածի համեմատ, մի կազմակերպակ մարմին լինէր, և այդ մարմինը տարին մի քանի անգամ իր անդամների համար մտածելու նստէր:

Եւ իմ աշխատութեան նպատակը: Ես խնդրում եմ առանձին ուշադրութիւն դարձնել, ուսումնասիրել ամեն կողմից ազգայնութեան արմատ հանդիսացող գիւղացու կեանքը, ճանաչել նորան, ճանաչել նորա բնական աշխարհը, որին հայրենիք ենք ասում:

Եւ ամօթ է այն ազգի համար, որ ձգտում է քաղաքակրթութեան աստիճանների վրա բարձրանալ, չը գիտենալ թէ ինչ է ինք և ինչ է իրան պէտքը:

Կիր—իր անձին աւելի հեղինակութիւն տալու նպատակով—այդ արդէն անհերքելի է: Մի քանի անգամ լսել եմ—ասում է Ն. Տ. Գ. օրինա-կելի «համեստութեամբ», որ (իմ) նամակը շատ համապատասխան է (?) հասարակութեան և ան տրամադրութեանը, շատ երբ բաւական են (sic) այն նամակով:—Այսպիսի մի ինքնագովութիւն լրագրութեան մէջ միշտ յանցանք ենք համարում. միթէ ժամանակ չէ որ վերանան այսպիսի համեստութիւնները:

Մի երկու խօսք էլ Ն. Տ. Գ. ի դատաւարտելի լուծութեան մասին: Իմ նամակին նամակիս առաջնորդող միտքը այն էր, թէ Ն. Տ. Գ.՝ առաջին անգամ լրագրութեան ասպարէզ դուրս գալով—մի ո՞ր և է տգէտ տիրացուի ազդեցութեամբ՝ իրեն նրա գործիք—կարծատեսութեամբ կամ անբարեխիղճօրէն է վարվել Մոսկովայի հայ հասարակութիւնը հետաքրքրող անցքերի ու խնդիրների հետ, հաղորդելով աննշան ու անպէտք լուրեր, չարելով զրպարտութիւններ արժանաւոր մարդկանց վրա և մի կողմ թողնելով աւելի կարեւոր և օգտաւէտ խնդիրները: Փոխանակ պատասխան տալու իմ խօսքերին, փոխանակ՝ ասում եմ՝ պաշտպանելու իր անձը և իրան ողորդող տիրացուն—Ն. Տ. Գ. խօսում է ինչ որ «հերոսական զգացմունքների» վրա, «կերթիկալի» վրա, «հասարակական կրթութեան» և «հասարակութեան (?) զգացմունքների» վրա, չարելով մէկ մէկու ետեից այդպիսի ուսուցիկ խօսքեր և ինքն էլ չը հասկանալով, թէ ինչ է ուզում ասել:

Կարծեմ այս քաղաքական պարզկեցաւ Ն. Տ. Գ. ի թեթեւ հայեացքը առհասարակ թղթակցութիւն գրելու վրա, այն մանր ու չնչին շարժառիթները, որոնք զրդել են նրան լրագրութեան ասպարէզ դուրս գալու. էլ բաւական է քննել նրա նամակը, որի ֆրազները մի առ մի թուելու ու քննադատելու ճանճրոյթ պիտի պատճառէ ընթերցողին, թէ և զուցէ բարբոսի ապարդիւն չանցներ նոյն իսկ Ն. Տ. Գ. ի համար. նա դեռ անփորձ է: Եւ իրաւի. ինչ անխոհմու-

Այսպիսի գործի համար հարկաւոր է մասնագէտների խումբեր, բայց որովհետեւ դոքա չը կան և ով գիտէ երբ կը լինեն, ես որքան որ կա-րողութիւն ունէի, նորա համեմատ աշխատեցի. յոյս ունեմ, որ ոչ ոք իրաւունք չի ունենայ իմ կարողութիւնից բարձրագոյնը ինձանից պահանջել:

1880 թւին դէպի վան արած ճանապարհորդութեանս միջոցին, աշխատեցի, որքան կարելի էր, ուսումնասիրել այդ նախագը, և նորա արդիւնքն էր այնքան ևս պատիւ ունեմ ձեզ ներկայացնել, չը նայած որ դա մի շատ պակասաւոր գործ է, բայց յոյս ունեմ որ դա յորդոր կը դառնայ կատարելատիպ աշխատութեանց:

Վիճակագրական թւերը հանած եմ սովորեց յանձնագրովի աշխարհագրից և հաշնագի այն դաւաճները, որ ես անձամբ չեմ կարողացել աւանդատել լինել, վարադալ վանքի իմ նամակին դասնիկներն իրա օգնութեան եմ դիմել:

Վասպուրական նահանգ և իւր գաւառներ

1.

Նահանգական քաղաք վան և Այգեւոտան:

Երևակայեցէք մի գեղեցիկ տարածութիւն միջից հաւատար բաժանված կապուտ և կանաչ գոյներով: Այդ գոյները ծովի և ծառաստանների գոյներն են:

Նորան, ինչպէս մի նկարի, ձուռձեւ չըջանա-կում են, արեւելքից վարադալ լեռը, որի աջ և ձախ մանր թերեր հասնում են ծովին:

Այդ բլրակների ետեից դէպի հարաւ բարձրանում են Արտոս լեռներ, դէպ հիւսիս Բերկ-րու և Արճիշ լեռներ, արեւմուտքից չըջապատում են ծովին Սլեփան, Ներսիսի և Գրգուռ լեռները:

Շրջիկ և Այգեւոտանի մէջ կղզիացած մի քա-րածայու կայ, ինչպէս մի կղզեւոր միջակէտ, արեւելքից արեւմուտք ձգված, քարեայ սանդուղ-տերով ծածկված, որոնք մաշվել են և բեւեռա-գրով զարդարած: Այդ պատմական հնութիւնը վանայ բերդն է, որ երեսուցից աւելի ձեռա-գործ քարայրներ ունի, ժայռերի մէջ ծակված հո-րեր, որոնք երկրի խորքն են իջնում և դեռ ընկած չեն, թէ ինչի են ծառայել և ուր են գնում: Բերդը հնումը անուանի, այժմ պատե-րազական ոչ մի նշանակութիւն չունի. նրան

թիւն Ն. Տ. Գ. ի կողմից, ինչ տխուր և ցաւալի երեւոյթ մեր լրագրութեան մէջ—զրիշ առ-նել ձեռքը և առաջին նամակը, առա-ջին տողը, որ դուռն ենք լրագրի մէջ՝ մրտենք թուղթը ուրիշի անձնական հայեանքի համար՝ անպատճառ ամբաստանութիւններ կու-տելով սրա—նրա զլխին, անպատճառ մեղադրա-կան ակտեր կարդալով գործունայ և վստա-կաւոր մարդկանց վրա: Միթէ էլ բան չը կար գրելու. միթէ ամբողջ Մոսկովա քաղաքը իր հա-մալարանական շրջաններով, իր քաղաքական, անտեսական և ուսումնական կեանքի հարուստ պարագաներով չը կարողացաւ ամբողջ տարվայ մէջ արտադրել մի ո՞ր և է այլ ինտերես Ն. Տ. Գ. ի համար, որ նա՝ իր առաջին գէրեւոր հայ լրագրութեան մէջ սկսում է միայն օտարի անձնական հայեանքով, արժանաւոր մարդկանց գովանի վստասկները ուրանալով և մի ուր և է տգէտ տիրացուի ձեռքը գործիք դառնալով... Պէտք է զգոյշ լինել այդպիսի փնտաւար աղե-ցութենից—այդպիսի տգէտ, բայց ճիշդիմ տի-րացուններից, որոնք վախճալով անձամբ հա-ղէս դուրս գալ կամ խօսել հրապարակօրէն՝ առանց խղճահարութեան որոտւ են անփորձ և րիտասարդներ իրանց կրքերի, իրանց անձնական հայեանքի համար:

Գ. ի.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՄՈՍԿՎԱՅԻՑ մեզ գրում են որ այդ քաղա-քում արդէն ինչ հոգի հայ պարոններից ցան-կութիւն են յայտնել գրելու պ. Գիւլօրէի լրա-գրին: Ինչպէս երևում է, եթէ Գիւլօրէի թերթը կաջողվի, նա 200-ից էլ շատ բաժանորդ կունե-նայ:

Կողքից, պ. Մարտիրոս Յովհաննիսեան թու-մանեանցից ստացանք 2 բուրլ յօդուտ վանի կողմերի երկրաշարժից վնասվածները:

Խորում են չըջալայ բլուրներ և Այգեւոտանի վերին մասը: Նա մի ուղղամթերանոց է, ունի երկու մեծ ամբարներ վառօդով լիք, հին և նոր զեն-քերի մի մեծ պահեստ:

Բերդի հարաւային երեսը մօտ 600 ֆուտ բարձ-րութեամբ սեպացած, պատի պէս կարված է: Այդ գահավիթի տակն են չինած քաղաքի թաղերը և արեւմուտքից չըջապատած է քաղաքը քարու-կիր կրկին պարիսպներով և խրամով:

Այստեղ են գետեղած կառավարութեան բո-լոր պաշտօնատները: Այստեղ է հայոց սահմա-նադրական վարչութեան կեդրոնը, հայոց առաջ-նորդարանը, վաճառանոցը իր առեւտրականներով և արհեստագործներով, որոնք աննշան բացառու-թեամբ բոլորն էլ հայեր են:

Այդ չըջանալի մէջ Այգեւոտան մի այլ պատ-կեր է ներկայացնում. մօտ եօթ վերստ երկա-յնութեամբ և հինգ վերստ լայնութեամբ, արեւել-քից դէպի արեւմուտք տիւրվում են գեղեցիկ այ-գիներ, լայն և ծառազարդ փողոցներով, որի երկու կողմից զլզլալով անցնում են աղբիւրի ջրեր: Գոքա բնական աղբիւրներ չեն: Այգեւ-տանից իրանց աղբիւրները ջրիւռ համար հորեր փորելով դուրս են բերել այդ ջրերը: Բոլոր Այ-գեւոտանը դոցանով է ջրվում:

Վանայ հնութիւնների մէջ ամենանշանաւորն է Ալեփու-քեար կամ Զմիւ-ղմի-նաղարայ, թիւր-քերէն թօփաքաղէ: Սա նոյնպէս մի շատ հին բերդ է, որի համար պատմութեան մէջ ոչ մի ծանօթութիւն չը կայ: Թիւրքս վանեցոյ աւան-դութեամբ պատմած Պղնձէ քաղաքը լինի Պա-տերի մէջ մնացած գերանների ծայրերի առեւիթ տերի մէջ մնացած գերանները ցոյց են տալիս, և ուրիշ այդպիսի առեւիթներ չեն: Նորա կենդա-նութեան:

Անդղիացի հնագէտ պ. Սեմսոն այս քաղաքայ-առի վրա դրած հողաբլուրը փորել տալով իմա-մի շինութեան հիմքերի վրա, որը կառուում է կարծվում: Գա մի հիւսնալի շինութեան հետք է, մաքուր տաշած կապուտ քարերի մի քանի կարգ առանց ձեւի չարված: Փորվածքի արդիւնք-ներն եղել էին մի քարեայ աւազան, այլ-ված, փտած պղնձի վաճանքի կտորներ, որոնք վրա դեռ երևում են նկարներ, եզան գլուխներ արդիւրից ձուռած, մի փղոսկրեայ կիսարձան և այլ պղնձի ամանեղէնների կտորներ, յատուկ